

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՐՄԱՆ ՀԱԿՈՒԻ**

**ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)**

Ը.00.03 «Ֆինանսներ դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ 2013**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի  
անվան տնտեսագիտության ինստիտուտում:

***Գիտական ղեկավար՝***

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
Չարությունյան Վլադիմիր Լիպարիտի

***Պաշտոնական ընդդիմախոսներ՝***

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
Բոստանջյան Վարդան Բաբկենի

տնտեսագիտության թեկնածու  
Առաքելյան Կարապետ Չովհաննեսի

***Առաջատար կազմակերպություն՝***

Հայաստանի ազգային ագրարային  
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ. հունիսի  
7-ին, ժամը 15:00-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՂ-ի թիվ  
015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, ք. Երևան, Աբովյան 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական  
համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ. մայիսի 6-ին:

015 մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար՝  
տեխ.գ.դ., պրոֆեսոր

Ա. Չ. Առաքելյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Ատենախոսության թեմայի արդիականությունը:** Փոքր ու միջին ձեռնարկությունների զարգացման, ինչպես նաև ճգնաժամային իրավիճակներում դրանց գործունեության հայեցակարգային մոտեցումներն իրենց մեջ ընդգրկում են մի շարք հիմնախնդիրներ: Վերջիններս գտնվում են հայ և արտասահմանյան հետազոտողների ուշադրության կենտրոնում, որոնց աշխատանքներում վեր բարձրացված հիմնադրույթները քննարկվում են ատենախոսության մեջ: Այստեղ առաջ են քաշվում բազմաթիվ մոտեցումներ, տեսակետներ, վարկածներ, որոնք կարող են ազդել ՓՄՁ-ների (փոքր ու միջին ձեռնարկություն) գործունեության և ճգնաժամային իրավիճակներում դրանց դիմացկունության բարձրացման և ճգնաժամների հաղթահարմանն ուղղված ներուժի լիարժեք օգտագործման վրա: Թեմայի արդիականությունը հիմնավորելու համար նախ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել այն հիմնախնդիրները, որոնք կարող են ազդել և՛ ՓՄՁ-ների գործունեության, և՛ ֆինանսատնտեսական ճգնաժամների պայմաններում արդյունավետ կառավարման ուղիների բացահայտման վրա:

ՀՀ-ում վերջին տարիներին գործարարությամբ զբաղվելու համար առաջացել են մի շարք դժվարություններ՝ պայմանավորված ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցություններով և չնայած այն հանգամանքին, որ կա ձևավորված իրավական դաշտ, ստեղծվել են համապատասխան կառավարման մարմիններ, ֆինանսական ներդրումներ են կատարվում օտարերկրյա ու միջազգային կազմակերպությունների կողմից, բարեփոխումներ են իրականացվել հարկային ու մաքսային դաշտում, ինչպես նաև վարկավորման բնագավառում, այնուհանդերձ, ՀՀ-ում գործարարության ծավալման խնդիրներն ունեն խորանալու միտում՝ բացակայում են տնտեսական խթանները, ՓՄՁ-ների և խոշոր ձեռնարկությունների համար մի շարք դեպքերում կիրառվում են երկակի ստանդարտներ, կան մի շարք կլանման դեպքեր, փոքր տեսակարար կշիռ ունեն նյութական ոլորտում զբաղված ՓՄՁ-ները, ՓՄՁ-ները չեն կազմում խոշոր ձեռնարկություններին աջակցություն ցուցաբերող շրթայի մասերը, տնտեսությունը չունի լոկոմոտիվի դեր կատարող խոշոր ձեռնարկություններ, որոնք կստեղծեն ՓՄՁ-ների վրա հիմնվող խոշոր բուրգ, մարզերում առկա են գործարարության անհամաչափ զարգացման հիմնախնդիրներ և այլն:

ՓՄՁ-ների կառավարման արդյունավետության բարձրացման այս հիմնահարցերը չի կարելի անտեսել, այլ՝ ընդհակառակը, բազմաթիվ մոտեցումների, այլընտրանքային տարբերակներից ճիշտ ընտրության և անգամ բանավեճերի ու քննարկումների հարթակ ստեղծելով պետք է փորձել լուծում տալ դրանց:

ՓՄՁ-ների հակաճգնաժամային կառավարման արդյունավետ մեխանիզմներ մշակելու հետ կապված տարբեր երկրներում իրականացված բարեփոխումների արդյունքները վերաբերում են մի շարք կարևորագույն հարցերի, որոնք կապված են պետական հատվածի ՓՄՁ-ների գործունեության հարցերում խթանող ազդեցության ընդլայնման, ՓՄՁ-ների աջակցության, հարկման և վարկավորման համակարգերի բարելավման, առաջխաղացման, ժամանակակից մոդելների, մեթոդների և մեխանիզմների ներդրման, կառավարման արդյունավետության բարձրացման հետ և այլն:

Վերոնշյալ խնդիրները, որոնց լուծումները հնարավոր է գտնել ՓՄՁ-ների համար հակաճգնաժամային կառավարման արդյունավետ մեխանիզմների մշակման, կիրառման, ինչպես նաև տնտեսության մակրո և միկրո մակարդակում արդյունավետության բարձրացման, կառուցվածքային հստակ մշակված բարեփոխումների իրականացման, ՓՄՁ ոլորտի զարգացման երկարաժամկետ ռազմավարության մշակման և օրենսդրական դաշտի կատարելագործման միջոցով բավականին արդիական և հրատապ են:

Այսպիսով՝ ատենախոսության թեմայի *արդիականությունը* պայմանավորված է վերը թվարկված հիմնախնդիրներով, որոնք պահանջում են խոր ու գիտականորեն հիմնավորված ուսումնասիրություն և վերլուծություն՝ բացահայտելու համար այն արդիական մոտեցումների համախումբը, որը հիմք կհանդիսանա ճգնաժամների պայմաններում ՓՄՁ-ների

դիմացկունության բարձրացման, գործունեության կատարելագործման և արդյունավետության բարձրացման համար:

**Ատենախոսության ուսումնասիրության օբյեկտը և առարկան:** Հետազոտության օբյեկտը ՀՀ ՓՄՁ-ների գործունեության համակարգն է՝ դրանում առկա հիմնախնդիրների համալիրով, իսկ ուսումնասիրության առարկան՝ ՀՀ ՓՄՁ ոլորտում ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակ առաջացած հայեցակարգային հիմնախնդիրն են, ինչպես նաև ոլորտում տեղի ունեցած կառուցվածքային տեղաշարժերն ու զարգացման միտումների փոփոխությունները:

**Ատենախոսության նպատակը և խնդիրները:** Ատենախոսության հիմնական նպատակն է՝ հետազոտել և վերլուծել ֆինանսատնտեսական ճգնաժամերի պայմաններում ՓՄՁ-ների գործունեության հայեցակարգային և մեթոդաբանական հիմնախնդիրները, միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա առաջարկել հակաճգնաժամային կառավարման արդյունավետության բարձրացման գիտականորեն հիմնավորված կառուցակարգեր, ինչպես նաև ուսումնասիրելով ՀՀ ՓՄՁ-ների գործունեության կազմակերպման առկա իրավիճակը և գնահատելով դրա հետագա զարգացման միտումներն ու հեռանկարները, անել առաջարկություններ ՓՄՁ-ների գործունեության կառավարման և հմտությունների կատարելագործման արդյունավետության բարձրացման ուղղությունների վերաբերյալ:

Նշված նպատակի իրականացման համար ատենախոսությունում դրվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- ուսումնասիրել ճգնաժամերի տեսությունները և դրանց առնչությունը փոքր ու միջին ձեռնարկությունների ֆինանսական գործունեության բնագավառում առկա հիմնախնդիրների հետ,
- ուսումնասիրել և վերլուծել ճգնաժամերի փոխանցման ուղիները և դրանց սոցիալ-տնտեսական ազդեցությունը ՓՄՁ-ների գործունեության վրա,
- ՓՄՁ-ների կողմից ճգնաժամերի հաղթահարման արտերկրյա փորձի վերլուծության հիման վրա՝ դիտարկել հանրապետությունում ՓՄՁ-ների կառավարման արդիական մեխանիզմների ներդրման հնարավորությունները,
- առավել համապարփակ և ամբողջական ներկայացնել ճգնաժամի պայմաններում ՀՀ ՓՄՁ-ների գործունեության հիմնական ֆինանսատնտեսական ցուցանիշների վերլուծությունը,
- վերլուծել ՓՄՁ-ների պետական կարգավորման մեխանիզմները՝ ֆինանսատնտեսական ճգնաժամի և հետճգնաժամային զարգացումների համատեքստում,
- ուսումնասիրել ՓՄՁ-ների գործունեության դաշտը և դրա բարելավման անհրաժեշտությունն ու հիմնախնդիրները ՀՀ-ում,
- ուսումնասիրել և վերլուծել ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումները և դրանց կապը ՓՄՁ-ների ճգնաժամի հաղթահարման մոտեցումների հետ,
- ուսումնասիրել և վերլուծել ՓՄՁ-ների կողմից ճգնաժամի հաղթահարման ներուժի բարձրացման և գործունեության ֆինանսական մեխանիզմների կատարելագործման հնարավորություններն ու ուղիները:

**Ատենախոսության տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:** Հետազոտության մեջ առաջադրված խնդիրների լուծման համար տեսական հիմք են հանդիսացել տնտեսագիտության, ֆինանսների կառավարման, ճգնաժամերի ժամանակակից տեսությունների հիմնադրույթները, դոկտրինաներն ու հայեցակարգերը, մոդելներն ու մեթոդները, ՓՄՁ-ների հակաճգնաժամային կառավարման համաշխարհային պրակտիկայում տեղ գտած բարեփոխումները, հայ և արտասահմանյան հետազոտողների կողմից ՓՄՁ-ների գործունեության կատարելագործման բնագավառում կատարած ուսումնասիրությունները:

Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ և արտասահմանյան երկրների օրենքները և իրավական ակտերը, ՀՀ կառավարության, ՀՀ ԱՎԾ-ի, ՀՀ ԿԲ-ի, ՀՀ ֆինանսների, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների, Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ-ի,

միջազգային կազմակերպությունների (Արժույթի միջազգային հիմնադրամ, Համաշխարհային բանկ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ և այլն) հրապարակումները և պաշտոնական տեղեկագրերը, ինչպես նաև տարբեր փորձագետների գնահատականները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համակարգային, իրավիճակային, ինդուկցիայի և դեդուկցիայի, վիճակագրական, խմբավորումների և համեմատական վերլուծությունների մեթոդներ:

**Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:** Ատենախոսության հիմնական գիտական նորույթն արտահայտվում է հետևյալ արդյունքներում՝

- ՓՄՁ-ների կողմից ճգնաժամերի հաղթահարման արտերկրյա փորձի, ինչպես նաև ֆինանսատնտեսական ճգնաժամերի պայմաններում ՓՄՁ-ների գործունեության առանձնահատկությունների ուսումնասիրության արդյունքում՝ գնահատվել են ՀՀ-ում այդ փորձի կիրառման հնարավորությունները և տեղայնացման մոտեցումները:
- Բացահայտվել են ֆինանսատնտեսական ճգնաժամերի պայմաններում ՓՄՁ-ների ճգնաժամերին դիմակայելուն ուղղված մոտեցումները՝ պայմանավորված տնտեսության մեջ տարբեր ուղիներով ներթափանցող ճգնաժամերի դեմ համապատասխան կանխարգելիչ համակարգեր կիրառելու տեսանկյունից:
- Մշակվել են ՓՄՁ-ների հակաճգնաժամային կառավարման մեխանիզմների կատարելագործման, ինչպես նաև ՓՄՁ-ների գործունեության խթանման համատեքստում ֆինանսական միջոցների հայթայթման այլընտրանքային մոտեցումներ՝ պայմանավորված պետական երաշխիքների տրամադրման և վարկավորման ռիսկերը նվազեցնող մեխանիզմների կիրառմամբ:
- ՓՄՁ-ների գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտի համակողմանի վերլուծության արդյունքում՝ բացահայտվել են ֆինանսատնտեսական ճգնաժամերի պայմաններում ՓՄՁ-ների գործունեության խթանման և հակաճգնաժամային կառավարման արդյունավետության բարձրացմանը միտված օրենսդրական դաշտի կատարելագործման հիմնական ուղղությունները՝ ՓՄՁ ոլորտում պետական քաղաքականության ծրագրային մոտեցումներն իրագործելու համատեքստում:

**Ատենախոսության արդյունքների գործնական նշանակությունը:** Ատենախոսության գործնական արդյունքների նշանակությունը կայանում է նրանում, որ մշակված գիտատեսական ընդհանրացումներն ու առաջարկությունները կարող են օգտագործվել պետական կառավարման մարմինների (Կառավարություն, ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ ֆինանսների նախարարությունների, Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ և այլն) կողմից ճգնաժամային իրավիճակներում և հետճգնաժամային զարգացումների ընթացքում հայեցակարգային և ռազմավարական փաստաթղթեր մշակելու գործընթացում, ինչպես նաև ՓՄՁ-ների գործունեության կատարելագործման ուղիների մշակման և արդիականացման ծրագրերի կազմման ժամանակ:

Ատենախոսության տեսական և գործնական որոշ արդյունքներ կարող են օգտակար լինել գործարարների և ՓՄՁ-ների կառավարման հիմնախնդիրներով զբաղվող հակաճգնաժամային կառավարման մասնագետների, տնտեսագետների և ֆինանսիստների համար:

**Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:** Ատենախոսության հիմնադրույթները և ուսումնասիրության արդյունքները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված վեց գիտական հոդվածներում:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսությունը շարադրված է 138 էջի վրա՝ առանց հավելվածների:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

*Ներածությունում* հիմնավորված է թեմայի արդիականությունն ու հրատապությունը, ներկայացված են հետազոտության նպատակները, խնդիրները, ձևակերպված են ուսումնասիրության օբյեկտը և առարկան, գիտական արդյունքները և նորույթը, ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը, ներկայացված է ուսումնասիրության մեթոդաբանությունը, ինչպես նաև հետազոտության տեղեկատվական հիմքերը:

Ատենախոսության առաջին՝ **«Ճգնաժամերի տեսությունները և փոքր ու միջին ձեռնարկությունների գործունեության մեթոդաբանական հիմքերը»** գլխում, քննարկվել և ուսումնասիրվել են ճգնաժամերի տեսությունները և դրանց առնչությունը փոքր ու միջին ձեռնարկությունների ֆինանսական գործունեության հետ, ինչպես նաև ներկայացվել են ճգնաժամերի փոխանցման ուղիները և դրանց ազդեցությունը ՓՄՁ-ների գործունեության վրա: Վերջում անդրադարձ է կատարվել նաև ՓՄՁ-ների կողմից ճգնաժամերի հաղթահարման արտերկրյա փորձի վերլուծությանը:

Համաշխարհային տնտեսության մեջ ճգնաժամերն ունեն պարբերաշրջանային բնույթ, քանի որ դրանք կրկնվում են ժամանակ առ ժամանակ, սակայն դրանց առանձնահատկություններից մեկն այն է, որ դրանք երբեք նույն ձևով հանդես չեն գալիս: Վերջինս առաջացնում է խնդիրներ դրանց կանխարգելման, ինչպես նաև բացասական ազդեցությունների դեմ պայքարի տեսանկյունից: Համաշխարհային տնտեսությունն այժմ առավել քան գլոբալացված է, իսկ այդ միտումները դեռևս շարունակվում են, իսկ տնտեսական գլոբալացումը խիստ մեծ ազդեցություն է ունենում ճգնաժամերի փոխանցման, ինչպես նաև մի երկրում տեղի ունեցող երևույթների այս կամ այն ուղով մյուս երկրներ անցնելու և փոխանցվելու տեսանկյունից:

Հաշվի առնելով վերոնշյալը պետք է նշել, որ աշխարհի մի շարք երկրներում տնտեսության զարգացման հիմքը կազմում են խոշոր կորպորացիաները, իսկ այդ կորպորացիաների գործունեությունը մեծապես պայմանավորված է նաև փոքր ու միջին ձեռնարկությունների գործունեությամբ, քանի որ տնտեսության մեջ կան մի շարք բաց խորշեր, որոնք կորպորացիաներն իրենց հսկայական չափերից ելնելով չեն կարող լցնել և դրանք զբաղեցնում են ՓՄՁ-ները: Այդ իսկ պատճառով ցանկացած տնտեսական ճգնաժամ, որն իր ազդեցությունն է ունենում խոշոր կորպորացիաների վրա ազդում է նաև ՓՄՁ-ների վրա: Դեռ ավելին, ինչպես ցույց է տալիս ասիական ճգնաժամը 1997թ.-ին կամ ԱՄՆ-ի 2008թ.-ի կեսերից սկիզբ առած հիփոթեքային ճգնաժամը, դրանք կարող են լինել որևէ հզոր կորպորացիայի կամ ընկերության սնանկացման արդյունքում:

Ուսումնասիրելով ճգնաժամերի վերաբերյալ Կ. Ռեյնհարթի<sup>1</sup> և Կ. Ռոգոֆֆի<sup>2</sup> աշխատությունները բացահայտում ենք մի շարք հետաքրքիր մոտեցումներ ճգնաժամերի տեսակների և դրանց շուրջ առկա հիմնահարցերի վերաբերյալ:

Այս համատեքստում մեծ հետաքրքրություն են ներկայացնում *ինֆլյացիոն ճգնաժամերը*, որոնք իրենց բնույթով ունիվերսալ են, ինչպես նաև ունեն պատմական մեծ կարևորության:

Ճգնաժամերի հաջորդ տեսակը կապված է արժուրային կտրուկ տատանումների հետ և հայտնի է որպես արտարժուրային ճգնաժամ: Իհարկե, խուսափել արտարժուրային ճգնաժամերից բավականին բարդ է, քանի որ մի շարք երկրներ իրենց արժուրային քաղաքականության մեջ անկախ չեն, իսկ վերջինս իր հետ բերում է ճգնաժամային երևույթներ, կամ վերջերս նոր ի հայտ եկած «Արտարժուրային պատերազմների»:

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ 2013թ.-ին Մոսկվայում կայացած G 20-ի կամ Մեծ քսանյակի երկրների հանդիպման ժամանակ, պայմանավորված ճապոնիայի կողմից դեֆլյացիոն քաղաքականությունից ինֆլյացիոն քաղաքականության անցման հետ,

<sup>1</sup> Carmen M. Reinhart, Kenneth S. Rogoff, “The Modern History of Exchange Rate Arrangements: A Reinterpretation”, NBER Working Paper No. 8963, Issued in May 2002, 106 p.

<sup>2</sup> Carmen Reinhart (University of Maryland, College Park), Kenneth Rogoff (Department of Economics, Harvard University).

քննարկվում էին առանձին արտարժույթների միջև առաջացող հակասությունները և «պատերազմները»:

Ճգնաժամերի հաջորդ տեսակը կապվում է *ակտիվների գների «փուլիկի պայթյուն»* (The Bursting of Asset Price Bubbles) կոչվող երևույթի հետ, որի մասնավոր դեպքն են հանդիսանում *անշարժ գույքի ճգնաժամերը*: Այս տեսակի ճգնաժամերից հիմնականում տուժում են տնային տնտեսությունները, որը հանգեցնում է նրանց գույքի և ունեցվածքի արժեքի նվազման, իսկ տնային տնտեսությունների մեծ մասը նույն ինքը ՓՄՁ-ներն են, այսինքն՝ անուղղակիորեն հարված է հասցվում ՓՄՁ-ների ակտիվներին, որը շատ դեպքերում հանգեցնում է ՓՄՁ-ների գործունեության դադարեցման համար ոչ նպաստավոր պայմանների առաջացման:

Համաշխարհային պրակտիկայում բավականին մեծ թիվ են կազմում նաև *պարտքային ճգնաժամերը* (Michael Bordo-ն, Barry Eichengreen-ը, Marc Flandreau-ն, Peter Lindert-ը, John Morton-ը, և Alan Taylor-ը<sup>3</sup>), որոնք իրենց հերթին դասակարգվում են արտաքին և ներքին խմբերի՝ ելնելով այն հանգամանքից թե՛ երկիրն անվճարունակ է ճանաչվել ներքին, թե՛ արտաքին պարտքերի պատճառով:

Հետաքրքիրն այն է, որ առանձին կազմակերպությունների սնանկացման արդյունքում ևս կարող են գրանցվել ճգնաժամեր և դա կարող է դիտարկվել որպես լուրջ տնտեսական շոկ: Շատ դեպքերում կազմակերպությունները թաքցնում են իրենց ֆինանսական դժվարությունները, որի արդյունքում կուտակային ազդեցությունը լինում է ավելի ծանր: Այստեղ կարող ենք մենք խնդրի լուծմանը մոտենալ Քեյնսի կողմնակիցների կամ պետական կարգավորման անհրաժեշտության տեսանկյունից և խիստ մեծ կարևորություն տալ այն հանգամանքին, որ կազմակերպությունների գործունեությունը պետք է վերահսկվի՝ նման դեպքերը բացառելու համար: Մյուս կողմից, խնդիրը դիտարկելով լիբերալ (ազատական) տեսության հայացքներից ելնելով պետք է նշել, որ ազատ գործելու և պետական միջամտության նվազագույն մակարդակը խիստ կարևորվում է այստեղ, սակայն ճգնաժամերն այս պարագայում ավելի մեծ հավանականություն ունեն և ավելի կործանարար կարող են լինել և այլն:

Աղյուսակ 1

**Համաշխարհային տնտեսական ճգնաժամի փոխանցման մեխանիզմները**

Սպենս (2009)	Բարժիսկի (2009)	Վիլեմ թե Վելդե (2009)	Դաբրովսկի (2009)	Վան և այլոք (2009)
Միջազգային փոխանցման մեխանիզմներ	Դեպի զարգացող երկրներ	Դեպի զարգացող երկրներ (10 երկրի օրինակի վրա)	Դեպի միջինից բարձր եկամուտներ ունեցող երկրներ	Դեպի ասիական երկրներ
<ul style="list-style-type: none"> <li>➢ Պորտֆելային ներդրումներ</li> <li>➢ Արտահանում</li> <li>➢ ՕՈՒՆ</li> <li>➢ Ջբոսաշրջություն</li> <li>➢ Ջարգացման օգնություն</li> <li>➢ Գիտելիք</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>➢ Միջազգային առևտուր և գյուղմթերքի ու հանածոների գներ</li> <li>➢ Կապիտալի հոսքեր և ֆինանսական շուկաների վիճակ</li> <li>➢ Տրանսֆերտներ</li> <li>➢ Ջարգացման օգնություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>➢ Մասնավոր ֆինանսական հոսքեր</li> <li>➢ Առևտուր</li> <li>➢ Տրանսֆերտներ</li> <li>➢ Ջարգացման օգնություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>➢ Թույլ համաշխարհային պահանջարկ (առևտրի ուղի)</li> <li>➢ Օգտակար հանածոների և գյուղմթերքի գների անկում (վճարային հաշվեկշիռ, դրամավարկային և երկրորդ փուլի ներքին պահանջարկի հետևանքներ)</li> <li>➢ Համաշխարհային իրացվելիության խնդիր (վարկի ուղի)</li> <li>➢ «Մայր» ֆինանսական հաստատությունների խնդիրներ (ոչ այնքան)</li> <li>➢ Ավելի մեծ ռիսկից խուսափում</li> <li>➢ Փոխարժեքի ավելի մեծ տատանում</li> <li>➢ Ֆինանսական ռեսուրսների արտամղում դրամավարկային խթանի պատճառով</li> <li>➢ Միգրանտ աշխատողների նկատմամբ պահանջարկի կրճատում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>➢ Ծառայությունների և ապրանքների առևտուր</li> <li>➢ Տրանսֆերտներ</li> <li>➢ ՕՈՒՆ</li> <li>➢ Ֆինանսական շուկաներ և այլն</li> </ul>

<sup>3</sup> Իհարկե, սա գիտնականների ամբողջական ցանկը չէ, որոնք աշխատել են դեֆոլտների թեմայով՝ պատմական տեսանկյունից: Նշենք, որ այն համալրվել է Lindert-ով և Morton-ով (1989թ.), Suter-ով (1992թ.), Purcell-ով և Kaufman-ով (1993թ.), ինչպես նաև MacDonald-ով (2006թ.): Անշուշտ, այս ոլորտի անհրաժեշտ գրականության ցանկը ներառում է նաև Winkler-ը (1933թ.) և Wynne-ը (1951թ.):

Տնային տնտեսությունների և ձեռնարկությունների վրա որևէ ճգնաժամի սոցիալ-տնտեսական ազդեցությունը ներկայացնելիս ընդունված եղանակ է դիտարկել երկրի ներսում ճգնաժամի սոցիալ-տնտեսական ազդեցության տարածման «փոխանցման ուղիները» և յուրաքանչյուր ուղով բացասական երևույթների տնտեսության մեջ ներթափանցելու հետևանքով առաջացած ազդեցությունը բնութագրող վիճակագրական ցուցանիշները: Այս մոտեցումներն իրենց արժանի տեղն են գտել նաև մի շարք հեղինակավոր տնտեսագետների աշխատություններում, որոնք տարբեր տեսանկյուններից ուսումնասիրել են ֆինանսատնտեսական ճգնաժամերի փոխանցման մեխանիզմները համաշխարհային պրակտիկայում: Վերոնշյալ տնտեսագետներից են՝ Բալիսաքան, Վանը և Ֆրանսիսկոն, Փերնիան և Նոլզը, Սումարտոն և այլոք:

Հայաստանում ընթացիկ հաշվի անհավասարակշռության խորացումը պայմանավորված էր ներքին խիստ մակրոտնտեսական անհավասարակշռություններով<sup>4</sup> և, հետևաբար, ըստ Միլեսի-Ֆերրեթիի և Ռազինի<sup>5</sup>, ընթացիկ հաշվի անհավասարակշռության խորացումը, որի պատճառը կարող էր լինել շուկա՝ ինչպես տեղական, այնպես էլ արտաքին, հանգեցնելու էր ճգնաժամի («տեղական արժույթի փլուզման»): Իսկ ըստ Բլինեյի<sup>6</sup>, ցածր եկամուտներ ունեցող երկրներում, որտեղ արժեթղթերի շուկան այդքան էլ զարգացած չէ, արժութային ճգնաժամ է համարվում դեպի վաճառք, որը պայմանավորված է ընթացիկ հաշվի անհավասարակշռություններով կամ այլ հանգամանքների վերացմամբ: Իսկ ՀՀ-ում 2009թ. ազգային արժույթի արժեզրկման չափը դուլարի նկատմամբ համապատասխանում է Ռեյնհարթի և Ռոգոֆֆի<sup>7</sup> արժութային ճգնաժամի սահմանմանը: Հետևաբար՝ ՀՀ-ում արժանագրվել է արժութային ճգնաժամ, որը պայմանավորված է եղել արտաքին շուկերով: Վերջինս իր ծանր հետևանքներն ունեցավ ներմուծվող հումքի վրա իրենց գործունեությունը կազմակերպող ՓՄՁ-ների գործունեության վրա, քանի որ դրանի արժեզրկումը ստիպեց ավելի թանկ վճարել ներմուծվող ապրանքների համար:

Աղյուսակ 2

**Համաշխարհային տնտեսական ճգնաժամի փոխանցման մեխանիզմների ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա**

ՄԱԿ-ի Աղբատության և սոցիալական ազդեցության խումբ (2010)	PFA-ի կողմից առաջարկված (2008)	Գյուլումյան (2009)	Քանազարաջահ (2010)
<p>Երեք միաժամանակյա շուկա՝</p> <ul style="list-style-type: none"> <li>➢ Արտահանման պահանջարկի կրճատում</li> <li>➢ Արտահանվող գյուղմթերքի և օգտակար հանածոների գների անկում</li> <li>➢ Տրանսֆերտների և մասնավոր կապիտալ հոսքերի կտրուկ կրճատում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>➢ Տրանսֆերտների կրճատում</li> <li>➢ Առևտրի և ներդրումների կրճատում (արտահանվող ապրանքների նկատմամբ պահանջարկի կրճատում, արտահանվող հիմնական ապրանքների գների անկում, ՕՈՒՆ)</li> <li>➢ Ֆինանսական հատվածից ծագող խնդիրներ</li> <li>➢ Պետական օգնություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>➢ Աշխատանքի շուկա և միգրացիա (գործազրկություն, տրանսֆերտներ)</li> <li>➢ Ապրանքների ու ծառայությունների շուկաներ (աճի տեմպի կրճատում, առևտրից, զբոսաշրջությունից ստացվող եկամուտների նվազում)</li> <li>➢ Կապիտալի շուկա (ՕՈՒՆ-ի և վարկերի կրճատում, դրամավարկային քաղաքականության հնարավորությունների սահմանափակում)</li> </ul>	<p>Արտաքին շուկա՝</p> <ul style="list-style-type: none"> <li>➢ Տրանսֆերտների կրճատում</li> <li>➢ Արտահանման կրճատում</li> <li>➢ ՕՈՒՆ</li> </ul>

<sup>4</sup> 2005-2008թթ. բյուջեի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցությունն անընդհատ նվազում էր, գնաճը շատ բարձր մակարդակի վրա չի եղել:

<sup>5</sup> Milesi-Ferretti, Gian Maria, Razin, Assaf, (1996). *Current-Account Sustainability* (Princeton Studies in International Economics No 81), International Finance Section Princeton Unive., 86 p.

<sup>6</sup> Bleaney, Michael, (2005), “The Aftermath of a Currency Collapse: How Different are Emerging Markets?” *The World Economy*, Volume 28, Issue 1, pp. 79-89.

<sup>7</sup> Reinhart, Carmen, and Rogoff, Kenneth (2009). *This Time is Different: Eight Centuries of Financial Folly*, Princeton University Press, Princeton, New Jersey: United States, 463 p.



Որոշ հեղինակներ փոխանցման մեխանիզմների և ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջման առումով մեխանիզմները նույնացնում են պատճառների հետ, այսինքն՝ ցույց է տրվում այն պատճառահետևանքային կապը, որի արդյունքում ճգնաժամ սկսվեց Հայաստանում:

Ուսումնասիրելով արտերկրյա կառավարությունների հակաճգնաժամային միջոցառումների բնույթն ու բնորոշ գծերը՝ նկատում ենք, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը նոր մարտահրավերների առջև կանգնեցրեց բոլոր երկրների կառավարություններին, որոնք սկսեցին ձեռնարկել բազմաթիվ ու բազմաբնույթ հակաճգնաժամային միջոցառումներ<sup>8</sup>: Այդ միջոցառումներն իրենց բնույթով բաժանվում են երկու խմբի՝ *դրամական* և *ոչ դրամական*:

Պետք է նշել, որ շատ կարևոր է նաև ճգնաժամային իրավիճակներում ոչ միայն պետական աջակցություն ստանալը, այլ նաև ՓՄՁ-ների կողմից որդեգրվող և ճգնաժամների դեմ պայքարելուն ուղղված ռազմավարությունները, տարբեր մոտեցումները ու սկզբունքները ճիշտ կիրառելը:

Նախ և առաջ՝ յուրաքանչյուր ՓՄՁ պետք է ունենա ճգնաժամների կառավարման իր յուրահատուկ սկզբունքները, որոնք երբեմն նույնն են գրեթե բոլոր ՓՄՁ-ների համար:

ՓՄՁ-ների համար, որպես հակաճգնաժամային կառավարման գլխավոր նպատակ պետք է դիտարկվի այնպիսի կառավարչական որոշումների ընդունումը, որոնք թույլ կտան հասնել դրված նպատակներին՝ նվազագույն լրացուցիչ միջոցներով և նվազագույն բացասական հետևանքներ ունենալով:

ՓՄՁ-ների կողմից ճգնաժամների հաղթահարման փուլային տրամաբանությունը պետք է կառուցվի հետևյալ կերպ.

- ճգնաժամի պարամետրերի և իրավիճակի գնահատում ու ախտորոշում,
- ճգնաժամի հաղթահարման հայեցակարգի մշակում, որն իր մեջ ընդգրկում է ռազմավարական և մարտավարական միջոցառումներ,
- ընդունված կամ մշակված հայեցակարգի իրագործում՝ ճգնաժամային իրավիճակից դուրս գալու համար,
- ներքին և արտաքին գործոնների մշտական մոնիթորինգ:

Այս չորս փուլերից յուրաքանչյուրն իր մեջ ընդգրկում է մի շարք տարրերի ուսումնասիրություն, ինչպես նաև կառավարման գործընթացում դրանց կիրառության անհրաժեշտություն: Վերջինս հնարավորություն է տալիս առավել իրագործելի դարձնել ձեռնարկությունների համար հակաճգնաժամային միջոցառումները:

Այս ամենը շատ մեծ կարևորություն է ստանում, քանի որ շատ դեպքերում ճգնաժամներից խուսափել հնարավոր է կառավարման ժամանակակից մեթոդների, ինչպես նաև արդյունավետ կառավարման մեխանիզմների կիրառության միջոցով: Բոլոր դեպքերում կառավարման արդյունավետության և հակաճգնաժամային միջոցառումների արդյունավետության խնդիրները պետք է դիտարկել կառավարման առանձին մակարդակներում, իսկ այդ մակարդակներից յուրաքանչյուրում պետք է ունենալ գործուն համակարգ՝ խուսափելու համար տնտեսական հնարավոր ցնցումներից և բացասական զարգացումներից:

Ատենախոսության երկրորդ՝ **«ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսատնտեսական հիմնախնդիրների վերլուծությունը ճգնաժամային իրավիճակներում»** գլխում, վերլուծվել և ուսումնասիրվել են ՀՀ ՓՄՁ-ների գործունեության հիմնական ֆինանսատնտեսական ցուցանիշների միտումները ճգնաժամի պայմաններում, ինչպես նաև ներկայացվել են փոքր ու միջին ձեռնարկությունների պետական կարգավորման մեխանիզմների վերլուծությունը ճգնաժամի և հետճգնաժամային զարգացումների համատեքստում: Այնուհետև, ներկայացվել են և՛ ՓՄՁ-ների գործունեության դաշտը, և՛ դրա բարելավման անհրաժեշտությունը ՀՀ-ում:

<sup>8</sup> Финансовый кризис в России и в мире. Под ред. Е.Т. Гайдара –М.: Проспект, 2009, с. 191-246.

ՀՀ կազմակերպությունները 2007թ. ապահովել են 212.9 մլրդ դրամի, 2008թ. գրեթե 208.2 մլրդ դրամի զուտ շահույթ, այն 2009թ. նվազել է մոտ 4-5 անգամ, որի պատճառով կազմել է 47.4 մլրդ դրամ, ինչ վերաբերում է խոշոր և միջին կազմակերպություններին, ապա 2008թ. վերջիններս ունեցել են 121.6 մլրդ դրամի զուտ շահույթ, որը կրճատվել է մոտ 110.2 մլրդ դրամով և կազմել է 10.9 մլրդ դրամ: Իսկ եթե հարցը դիտարկում ենք փոքր կազմակերպությունների կտրվածքով, ապա նկատում ենք, որ 2008թ. փոքր կազմակերպությունների զուտ շահույթի մասնաբաժինը կազմել է 86.5 մլրդ դրամ, որը 2009թ. կազմել է 36.4 մլրդ դրամ, այսինքն՝ մեկ տարվա անկումը փոքր կազմակերպությունների մոտ 50 մլրդ դրամ է: Վերջինս բավականին խոշոր և ահագանգող ցուցանիշ է<sup>9</sup>:

Ստացվում է, որ փոքր կազմակերպություններն իրենց զուտ շահույթի ցուցանիշով 2009թ. գտնվել են ավելի լավ դիրքում, քան միջին և խոշոր կազմակերպությունները, այսինքն՝ 47.3 մլրդ դրամից 10.9 մլրդ դրամը խոշոր և միջին կազմակերպություններին է պատկանել, իսկ 36.4-ը՝ փոքրերին, որը խոսում է փոքր կազմակերպությունների առավել կենսունակ լինելու մասին:

Ոլորտային առումով 2009թ. բացասական զուտ շահույթով կամ վնասով են աշխատել էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման (-45.2 մլրդ դրամ), մշակող արդյունաբերության (-17.5 մլրդ դրամ), հանքագործական արդյունաբերության (-7.9 մլրդ դրամ) և գյուղատնտեսության, որսորդության և անտառային տնտեսության, ինչպես նաև ձկնորսության, ձկնաբուծության ոլորտները: Վերոնշյալ ոլորտները 2008թ. աշխատել են զուտ շահույթով: Իսկ 2009թ. զուտ շահույթի ցուցանիշը բարձր է եղել առևտրի ոլորտում (35.6 մլրդ դրամ), տրանսպորտի և կապի ոլորտում (36.0 մլրդ դրամ), շինարարության ոլորտում (20.3 մլրդ դրամ), որն ի դեպ 2008թ.-ի ցուցանիշից մոտ 2 անգամ ավելի է:

Աննախադեպ աճ է նկատվել նաև հանքագործական արդյունաբերության բնագավառում, որտեղ կազմակերպությունների արտադրանքի շահութաբերությունը 2009թ. հասել է 31.7%-ի նախորդ տարվա 12.7%-ի փոխարեն, իհարկե այստեղ բացատրությունները պետք է փնտրել համաաշխարհային հումքի շուկաներում մի շարք մետաղական հանածոների հումքի գների անկման և միայն 2009թ. դրանց որոշակի վերականգնման, ինչպես նաև արդյունահանման քանակի աննախադեպ աճի մեջ<sup>10</sup>:

Ինչ վերաբերում է վնասներ կրած ոլորտներին, ապա դրանց թվին են պատկանում առողջապահության և սոցիալական ծառայությունների մատուցման, ինչպես նաև կոմունալ ծառայությունների մատուցման ոլորտները:

ՓՄՁ-ներն ունեն նաև մի շարք մտահոգություններ և դժգոհություններ, քանի որ շատ ձեռնարկությունների համար տնտեսական իրավիճակի բարելավումն առայժմ նկատելի չէ, և դեռևս ճգնաժամի խորացման վտանգ կա: Այդ իսկ պատճառով ձեռնարկություններն ակնկալում են, որ տնտեսական քաղաքականությունը կփոփոխվի, և իրենց համար առավել նպաստավոր պայմաններ ստեղծելու համար առաջարկում են իրականացնել վարկերի տոկոսադրույքների իջեցման քաղաքականություն և տրամադրել ցածր տոկոսադրույթով երկարաժամկետ վարկեր, մյուս կողմից թեթևացնել հարկային բեռն ու ավելի պարզեցնել հարկային դաշտը և այլն:

Գործող ՓՄՁ-ները ճգնաժամից քաղել են նաև մի շարք դասեր.

- ճգնաժամը ստիպեց բախվել այնպիսի խնդիրների, ինչպիսին է՝ բիզնեսի և առանձին գործընթացների ճիշտ կազմակերպումը, որն ընդգրկում է մարքեթինգային միջոցառումների իրականացումը, սպասարկման որակի բարձրացումը, գների իջեցումը հնարավորության դեպքում և որակյալ աշխատակիցների ներգրավումը, ծախսերի կրճատումն ու էժան տեսականու ձեռքբերումը և այլն:

<sup>9</sup> Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2010, ՀՀ ԱՎԾ, էջ 31:

<sup>10</sup> *Նշում.* ՀՀ ԱՎԾ-ի կողմից Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2010 ժողովածուն հրապարակելուց հետո հետագա տարիների հրապարակումներում բացակայում են ՀՀ կազմակերպություններին առնչվող վերոնշյալ ցուցանիշները, այդ իսկ պատճառով դրանք ներկայացվել են 2008 և 2009թթ. տարիների համար:

- Տեսականու և մատուցվող ծառայությունների ընդլայնումը, ինչպես նաև գործունեության ոլորտային դիվերսիֆիկացիայի ապահովումը՝ հնարավոր ռիսկերից խուսափելու համար:
- Ներդրումային նախագծերի իրագործումն ինչպես սեփական, այնպես էլ ձեռքբերված միջոցների հաշվին, հնարավորության դեպքում խնայողությունների ավելացումը և ներդրումային նպատակներով դրանց օգտագործումը:
- Ձեռնարկություններից մոտ 13%-ը գտնում է, որ չի դիմանա նման պայմաններին և կդադարեցնի իր գործունեությունը:
- Մոտ 10%-ի է հասնում այն կազմակերպությունների թիվը, որոնք գտնում են, որ պետք է ամեն գնով խուսափել վարկեր վերցնելուց, քանի որ վարկերը չեն նպաստում գործունեության ընդլայնմանը և զարգացմանը:
- Որոշ կազմակերպություններ պատրաստվում են նման միտումների պարագայում գործունեությունը դադարեցնել և արտերկրում գործունեություն ծավալել և այլն:

Այսպիսով, կան և՛ վատատեսական, և՛ լավատեսական, ինչպես նաև իրատեսական և չնահանջելով հաղթահարելու մոտեցումներ ունեցող կազմակերպություններ: Եվ այս պարագայում շատ կարևոր է, որ պետությունը լինի այդ կազմակերպությունների կողքին, քանի որ փոքր ձեռնարկությունների և դրանց միջին ձեռնարկության վերածվելու գաղափարի ներքո պետք է թաքնված լինի տնտեսական զարգացումը, իսկ չդիմանալով ճգնաժամի դժվարություններին և դադարեցնելով իրենց գործունեությունը՝ պետության համար հետագա քաղաքականությունը վերածվելու է ոչ թե գործողներին աջակցություն ցուցաբերելու քաղաքականության, որն ավելի հեշտ է, այլ նորերի ստեղծման խնդիր է դառնալու, որն իսկապես ավելի բարդ է և ռիսկային:

Պետք է նշել, որ 2011թ.-ին վերջին մշակվել է Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային ռազմավարությունը, որը կարելի է ասել 2-րդ ռազմավարությունն է սկսած 2000թ.-ին մշակված ռազմավարությունից հետո: Այստեղ հետաքրքիրն այն է, որ ներգրավել են մի շարք հեղինակավոր կազմակերպություններ, ինչպես նաև հստակ նախանշվել են ռազմավարական նպատակներ և արդյունքային ցուցանիշներ:

Որպես այդպիսին ՓՄՁ աջակցության ռազմավարության իրականացման արդյունքային ցուցանիշներ են վերցվել՝

- Մեծացնել երկրի ՀՆԱ-ի մեջ ՓՄՁ-ների ավելացված արժեքը 10%-ով:
- Բարելավել երկրի դիրքը Համաշխարհային բանկի Doing Business հաշվետվության մեջ ևս քսան կետով:

Այսինքն՝ քայլեր, որոնք հստակ ուղենիշ են նախատեսում, սակայն կարելի է նաև հստակ ժամկետներ սահմանել, որպեսզի արդյունքային ցուցանիշները լինեն ավելի կոնկրետ:

Հետաքրքիր է այն փաստը, որ Հայաստանում ՓՄՁ ՁԱԿ-ի (Ձարգացման ազգային կենտրոն) կողմից բավականին փոքր ծավալ է կազմում ՓՄՁ-ների աջակցությունը, քանի որ աջակցության ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող մասնաբաժինն ունեն տեղեկատվական և խորհրդատվական աջակցությունը՝ 3,588 դեպք, իսկ սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն՝ 17 և վարկային երաշխավորությունների տրամադրման՝ 11 դեպք: Վերջինս փաստում է այն մասին, որ լուրջ ֆինանսական աջակցություն ՀՀ ՓՄՁ-ները չեն ստանում:

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ աջակցություն ստացած ՓՄՁ սուբյեկտների 11.3%-ը գործում են Երևան քաղաքում, իսկ 88.7%-ը՝ ՀՀ մարզերում՝ առավելապես հեռավոր և սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում: Այսինքն՝ այստեղ տարածքային համաչափ զարգացման կամ մարզերին աջակցության մոտեցումն է գործում, որը կարելի է դրական համարել:

Այնուամենայնիվ, փաստը մնում է այն, որ ՀՀ-ում ՓՄՁ հատվածի զարգացման համար պետական աջակցությունը նյութականացված բնույթ (ֆինանսավորում) այնքան էլ չունի, այս գործառույթն իրենց վրա են կրում բանկերը, որոնք վարկավորման ծանր պայմաններով փորձում են տրամադրել վարկեր, իսկ այդ վարկերի մարման

դժվարությունները մի շարք ՓՄՁ-ների համար ունենում են ոչ բարենպաստ ավարտ, այն է՝ սնանկացման մի շարք դեպքեր են գրանցվում:

Աղյուսակ 3

**ՀՀ ՓՄՁ-ներին տրամադրված աջակցության ուղղությունները<sup>11</sup>**

Տրամադրված աջակցության ուղղություն	Առ 01.01.2012թ. բավարարված աջակցության հայտերի թվաքանակ
Տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	3,588
Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն	95
Սկսնակ գործարարներին ֆինանսական աջակցություն	17
Թողարկվող արտադրանքի/մատուցվող ծառայությունների շուկաներ առաջնորդման և արտահանմանն աջակցություն	47
Վարկային երաշխավորությունների տրամադրում	11
ՁԵՑ-ի (Ձեռնարկությունների եվրոպական ցանց) հաղորդակցման կենտրոնի գործունեության շրջանակներում աջակցություն	22
<b>Ընդամենը</b>	<b>3,780</b>

Այսպիսով՝ ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցություններն իրենց վրա զգացին աշխարհի և Հայաստանի մի շարք ՓՄՁ-ներ: Բավականին դժվարին իրավիճակում հայտնված ՓՄՁ-ներ ստիպված էին շատ դեպքերում ընտրություն կատարել գործունեության դադարեցման և մյուս կողմից գործունեությունը շարունակելու հարցում: Այդ իսկ պատճառով նրանց կողմից որդեգրվում էին ռազմավարություններ, որոնք շատ դեպքերում արդարացված չէին: Ինչ վերաբերում է ՓՄՁ-ների պետական աջակցությանը և ֆինանսավորմանը, ապա այստեղ խնդիրներն էական լուծում չստացան, որի արդյունքում հայաստանյան ՓՄՁ-ների մեծ մասը դեռևս շարունակում է վերականգնվել 2009թ.-ի ֆինանսատնտեսական ճգնաժամի ուժեղ հարվածից հետո:

ՓՄՁ-ի, որպես ժամանակակից տնտեսության կարևոր բաղկացուցիչ մասի, զարգացման նպատակներն առաջին հերթին առնչվում են տնտեսական դաշտի հետ:

Ձեռնարկատիրական միջավայրը գնահատելու և փոքր ու միջին ձեռնարկությունների հիմնախնդիրները բացահայտելու համար չափազանց կարևորվում են Doing Business<sup>12</sup> ամենամյա ժողովածույուն, Համաշխարհային բանկի կողմից առաջարկվող ցուցանիշը, որը 2013թ.-ին արդեն հաշվարկվել են 185 երկրների համար, ինչպես նաև Տնտեսական ազատության ինդեքսը (համաթիվը)<sup>13</sup>: Հայաստանը ձեռնարկատիրական գործունեության վարման ազատության (ՉԳՎԱ) համաթիվով գտնվում է 32-րդ տեղում, իսկ օրինակ՝ Վրաստանը 9-րդ վարկանիշով բավականին առաջ է Հայաստանից: Հետևապես, կարելի է արձանագրել, որ հաջողություններ այս ասպարեզում բավականին կան, սակայն չի կարելի սահմանափակվել դրանով:

Այսպիսով՝ միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա անհրաժեշտ է բարեփոխումների և կատարելագործման միջոցով ՓՄՁ ոլորտի վրա ազդող դրական գործոնները կատարելագործել և հնարավորինս կրճատել բացասական ազդեցությունները, որն, իհարկե, իր անմիջական ազդեցությունը կունենա ՀՀ ձեռնարկատիրական միջավայրի բարելավման և տնտեսավարող սուբյեկտների գործունեության արդյունավետության բարձրացման, ինչպես նաև միջազգային ասպարեզում մեր ձեռնարկությունների մրցունակության բարձրացման վրա:

Ատենախոսության երրորդ՝ **«ՓՄՁ-ների ճգնաժամի հաղթահարման մեխանիզմների կատարելագործման ուղիները ՀՀ-ում»** գլխում ներկայացվել են ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումները և դրանց կապը ՓՄՁ-ների ճգնաժամի

<sup>11</sup> <http://smednc.am/?laid=2&com=module&module=menu&id=359>

<sup>12</sup> [www.doingbusiness.org](http://www.doingbusiness.org)

<sup>13</sup> [www.heritage.org](http://www.heritage.org)

հաղթահարման մոտեցումների հետ: Այնուհետև, ներկայացվել են ՓՄՁ-ների կողմից ճգնաժամի հաղթահարման ներուժի բարձրացման և գործունեության ֆինանսական մեխանիզմների կատարելագործման ուղիները:

ՀՀ կառավարությունը զգալով ճգնաժամի մոտեցող ալիքի ազդեցությունը<sup>14</sup> դեռևս 2008թ. նոյեմբերի 12-ին ՀՀ Ազգային ժողով ներկայացրեց հակաճգնաժամային միջոցառումների ծրագիրը, որը որոշակիորեն և առանձին դեպքերում կրկնեց զարգացած երկրների փորձը, բայց որոշ հարցերում առաջնորդվեց սեփական մոտեցումներով:

ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումների նպատակը ճգնաժամի հաղթահարումն ու դրա բացասական ազդեցությունների նվազեցումն էր, որի համար կարևորվեց նակրոտնտեսական և ֆինանսական հատվածի կայունության ու տնտեսական աճի ապահովման լրացուցիչ խթանների բացահայտումը և ներդրումը, իսկ դրանց հասնելու ուղիներ դիտարկվեցին<sup>15</sup>.

- գործարար միջավայրի բարելավումը, այդ թվում՝ հարկային վարչարարության դաշտի պարզեցումը և փոքր բիզնեսի համար վարչարարության հետ կապված ծախքերի էական կրճատումը,
- գործարարությանը ժամանակավոր աջակցության տրամադրումը, այդ թվում՝ ուղղակի վարկավորման, երաշխիքների տրամադրման և կապիտալում մասնակցության ձևով,
- ՓՄՁ-ների վարկավորման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ներգրավումը,
- ենթակառուցվածքներին ուղղված ծրագրերի իրականացումը և այդ շրջանակներում նոր աշխատատեղերի ստեղծումը,
- սոցիալական ուղղվածություն ունեցող ծրագրերի իրականացման և պետության ստանձնած սոցիալական պարտավորությունների կատարման առաջնահերթությունը:

Կարելի է փաստել, որ վերոնշյալ 5 կետերից 3-ն առնչվում էին գործարարության հետ, սա ցույց է տալիս, որ ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումների ուղղվածության առյուծի բաժինն ընկել է հենց գործարարության հարցերի կարգավորմանը:

ՀՀ-ում իրականացված հակաճգնաժամային միջոցառումները ներառված են եղել 16 խոշորացված խմբերում, որոնք բազմաթիվ են ու բազմաբնույթ: Սակայն այդ միջոցառումներն առավել շատ միտված են եղել հաջորդող տարիներին, քանի որ տնտեսության ֆինանսական «ներարկումներն» իրականացվեցին, հիմնականում, 2009թ. 2-րդ կիսամյակում: Բացի դրանից, ձեռնարկված առանձին ծրագրային միջոցառումներ գործողության են վերածվել հաջորդող տարիներում: Ուստի, սպասելի պետք է համարել տնտեսության երկնիչ թվով անկումը 2009թ.՝ հատկապես, որ ՀՀ տնտեսության կառուցվածքը դիվերսիֆիկացված չէ և տարիներ շարունակ կախված է եղել արտաքին տրանսֆերտներից, շինարարությունից և հանքարդյունաբերությունից: Ուստի, այդ և այլ օբյեկտիվ պատճառներով ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումները պետք է համարել որոշ առումով արդյունավետ, քանի որ տնտեսական անկումն ավելի չեղավ հենց հակաճգնաժամային լայնամասշտաբ միջոցառումների շնորհիվ: Իսկ մյուս կողմից այդ միջոցառումները կարելի է ասել այնքան էլ ուղղված չէին ՓՄՁ ոլորտի առողջացմանը, քանի որ մի շարք ՓՄՁ-ներ լուրջ տնտեսական դժվարությունների առաջ կանգնեցին, իսկ աջակցության մի շարք դեպքերում ուշադրության կենտրոնում հայտնվում էին ոչ թե փոքր ու միջին, այլ խոշոր ձեռնարկությունները, որոնց աջակցությունը ստիպում էր ՓՄՁ-ներին գիջել իրենց դիրքերը կամ կորցնել առանց այն էլ շուկայում ունեցած չնչին մասնաբաժինը: Այսինքն՝ կարելի է արձանագրել, որ ՀՀ կառավարության կողմից ձեռնարկված միջոցառումներն արդյունավետ էին, բայց

<sup>14</sup> Հայաստանում տնտեսական ճգնաժամի առաջին նշաններն ի հայտ եկան 2008թ. նոյեմբերի վերջերին, երբ միջազգային շուկաներում նկատվեց Հայաստանից արտահանվող պղնձի խտանյութի կտրուկ զնանկում (տես, Հարությունյան Վ.Լ., Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ. պատճառներ, հակաճգնաժամային միջոցառումներ և դասեր, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2009, էջ 25):

<sup>15</sup> Հայաստանի Հանրապետության կառավարության հակաճգնաժամային միջոցառումներ, Ամփոփ հաշվետվություն, նոյեմբեր 2009, «Սամարկ» տպագրատուն, էջ 2-3:

դրանց մեջ կար անհավասարության ուղղվածություն, քանի որ համամասնական բաշխվածություն և արտոնությունների տրամադրում, ինչպես նաև աջակցություն ցուցաբերվում էր կա՛մ կոնկրետ ոլորտի, կա՛մ կոնկրետ կազմակերպությունների, այսինքն՝ միջոցառումների տարածման դաշտը նեղ էր, իսկ նորմալ բաշխվածություն ևս չկար:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն իր բացասական ազդեցությունը թողեց նաև ՓՄՁ-ների վրա, քանի որ տնտեսական այս միավորները չունեն այն հսկայական ներուժը, որ կարողանան դիմակայել ուժեղ տնտեսական հարվածների: Այդ իսկ պատճառով շատ երկրներում ՓՄՁ-ների աջակցության խնդիրը, հատկապես ճգնաժամային իրավիճակներում մղվում է առաջին պլան: Այս առումով առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում այն հիմնախնդիրները, որոնց բախվում են ՓՄՁ-ները ճգնաժամների ժամանակ և մյուս կողմից պետական աջակցության այն մեխանիզմները, որոնք ուղղված են այդ խնդիրների արդյունավետ կերպով լուծմանը կամ գոնե դրանց բացական ազդեցությունների և հետևանքների մեղմմանը:

Այս առումով հետաքրքրություն է ներկայացնում ՏՀՁԿ-ի (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն) կողմից 2009թ. հրապարակված «Համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը ՓՄՁ-ների և ձեռնարկատիրության վրա. Ֆինանսավորում և հակազդող քաղաքականություն»<sup>16</sup> փաստաթուղթը, որտեղ քննարկվող հարցերում իսկապես բարձրացվում են ՓՄՁ-ների ֆինանսավորման և աջակցության դժվարությունները:

Բավականին հետաքրքիր է նաև Եվրոպական հանձնաժողովի կողմից 2009թ. հրապարակված «Եվրոպական ՓՄՁ-ները ճնշման տակ»<sup>17</sup> տարեկան զեկույցը, որտեղ բարձրացվող հարցերը կրկին առնչվում են ճգնաժամի բացասական ազդեցությունների և մյուս կողմից ձեռնարկությունների հնարավորությունների հետ:

ՓՄՁ-ների գործունեության մի շարք կարևորագույն հարցադրումներ են քննարկվում նաև Աշխատուժի միջազգային կազմակերպության (ILO)<sup>18</sup> փորձագետ Պաուլ Վանդենբերգի կողմից 2009թ.-ին հրապարակած «Գերփոքր (միկրո), փոքր և միջին չափերի ձեռնարկությունները և համաշխարհային տնտեսական ճգնաժամը. ազդեցություններ և հակազդող քաղաքականություն» աշխատությունում: Այստեղ մեծ կարևորություն է տրվում մարդկային կապիտալին, վարկային երաշխիքների համակարգին, միկրո ֆինանսավորմանը, զբաղվածության և ինքնազբաղվածության հիմնահարցերին:

Ուշագրավ է նաև Համաշխարհային բանկի մասնագետների կողմից 2011թ. հունվարին հրապարակած «Փոքր և միջին ձեռնարկությունների համադրական վերլուծությունն առանձին երկրներում»<sup>19</sup> փաստաթուղթը: Այստեղ բարձրացվող հարցերն առնչվում են ՓՄՁ-ների գործունեության կարգավորման հետ, մյուս կողմից բերվում են ՓՄՁ-ների չափերի համադրություններ՝ կապված աշխատողների թվաքանակից և այլն:

Այս փորձը շատ ուսանելի կարող է լինել Հայաստանի համար, քանի որ նկարագրած հիմնախնդիրներն ունեն ոչ միայն զարգացած երկրների հետ կապվածություն, այլ նաև սերտորեն կապված են զարգացող երկրների հետ: Հարցը նրանում է, որ շատ հիմնահարցերը, որոնք ներկայացվում են զարգացող երկրների օրինակով տիպիկ

<sup>16</sup> The Impact of the Global Crisis on SME and Entrepreneurship Financing and Policy Responses, Contribution to the OECD Strategic Response to the Financial and Economic Crisis, Centre for Entrepreneurship, SMEs and Local Development, OECD 2009, 72 p. [www.oecd.org/dataoecd/36/27/42514077.pdf](http://www.oecd.org/dataoecd/36/27/42514077.pdf)

<sup>17</sup> European Commission, European SMEs under Pressure, Annual Report On EU Small and Medium - Sized Enterprises 2009, Directorate-General for Enterprise and Industry, 60 p. [http://ec.europa.eu/enterprise/policies/sme/facts-figures-analysis/performance-review/pdf/dgentr\\_annual\\_report2010\\_100511.pdf](http://ec.europa.eu/enterprise/policies/sme/facts-figures-analysis/performance-review/pdf/dgentr_annual_report2010_100511.pdf)

<sup>18</sup> Micro, small and medium-sized enterprises and the global economic crisis: impacts and policy responses /Paul Vandenberg; International Labour Office, Sustainable Enterprise Programme. - Geneva: ILO, 2009, 46 p. [http://www.ilo.org/wcmsp5/groups/public/@ed\\_emp/@emp\\_ent/documents/publication/wcms\\_108413.pdf](http://www.ilo.org/wcmsp5/groups/public/@ed_emp/@emp_ent/documents/publication/wcms_108413.pdf)

<sup>19</sup> Small and Medium Enterprises A Cross-Country Analysis with a New Data Set, Oya Pinar Ardic, Nataliya Mylenko, Valentina Saltane, The World Bank, Financial and Private Sector Development, Consultative Group to Assist the Poor, January 2011, 32 p.

բնորոշ են նաև Հայաստանին: Այս առումով կարելի է ենթադրել, որ շատ խնդիրների լուծումները կարելի է գտնել համաշխարհային փորձի առավել խոր ուսումնասիրության արդյունքում:

Հայաստանում ՓՄՁ-ների ներուժը հարկավոր է լիարժեք օգտագործել, ստեղծել նրանց համար գործելու լիարժեք պայմաններ, ինչպես նաև ցանկացած տնտեսական գործունեություն, որն ունի անգամ չնչին շահութաբերություն, կամ վատագույն դեպքում կարող է հասնել ինքնաձախսածածկման կետին պետք է երաշխիքների միջոցով ֆինանսավորել:

Այս ամենից ելնելով փորձենք համառոտ ներկայացնել այն հնարավոր լուծման ուղենիշերը, որոնք կարող են ՓՄՁ-ներին հնարավորություններ տալ առավել կենսունակ լինելու ճգնաժամերի պայմաններում.

- Հարկավոր է մշակել հնարավոր մոտեցումներ ՓՄՁ-ների տեղեկատվական հասանելիությունն առավել բարձր մակարդակի հասցնելու համար, ինչպես նաև զարգացնել կառավարություն և ՓՄՁ-ներ փոխհարաբերությունների մակարդակը:
- Հաջորդ քայլով հարկավոր է հզորացնել ՓՄՁ-ների ունակությունները, որոնք պետք է արտահայտվեն կառավարչական հմտությունների հզորացման, ֆինանսական կառավարման ոլորտում գիտելիքների ընդլայնման հարցերում և այլն:
- Բանկեր և ՓՄՁ-ներ կապի ուժեղացում և վարկավորման արտոնյալ պայմանների ստեղծում, ինչպես նաև ցածր տոկոսադրույքներով վարկերի տրամադրում, երաշխիքների արդյունավետ գործող համակարգի ներդրում:
- ՓՄՁ-ների գործունեության դադարեցման՝ սնանկացման, լուծարման և այլ դեպքերի ուսումնասիրություն և առաջացող խնդիրների կարգավորման ուղղությամբ հստակ քաղաքականության մշակում:

Հարկ է նշել, որ դրական է համարվում, որպեսզի ՓՄՁ-ների համար մշակվեն հիմնախնդիրների լուծման ուղիներ, սակայն կարևոր է նաև այդ ուղիներից յուրաքանչ-յուրը վերածել հստակ գործող ծրագրի, իսկ ծրագրային հարցերի շրջանակներում դրանց տալ ավելի արդյունավետ լուծումներ:

Հայաստանի ՓՄՁ սուբյեկտներին աջակցության համապատասխան ենթակառուցվածքների ձևավորումը պետք է դիտարկել որպես առաջնային խնդիր, քանի որ առանց հստակ մշակված մեխանիզմների այդ ենթակառուցվածքը միշտ էլ գործելու է թերի, մյուս կողմից ՓՄՁ-ներն աջակցություն չզգալով ունենալու են զարգացման դժվարություններ՝ փնտրելու են առավել նպաստավոր տնտեսական պայմաններ և գործարար միջավայր իրենց գործունեությունը շարունակելու համար: Այս առումով մենք ունենք լուրջ նրբակից մեր կողքին՝ ի դեմս Վրաստանի, որը կարող է լուրջ խնդիրներ ստեղծել ՀՀ-ից կապիտալի արտահոսքի և ակտիվ ձեռնարկատիրական մասսայի դեպի Վրաստանի տեղափոխվելու առումով:

ՓՄՁ-ների զարգացման համար կարևոր է նաև տեղական արտադրանքի խթանումը և տեղական ապրանքանիշերի ձևավորումը, այստեղ անգամ ՓՄՁ-ների խմբեր, միասնական ապրանքանիշով հանդես գալու գաղափարներ է հարկավոր կյանքի կոչել, այսինքն՝ կոորդինացնել միևնույն տեսակի արտադրանք թողարկող ձեռնարկությունների միավորման գործընթացը:

ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի արտահանմանն աջակցության ծրագրերը ևս անհրաժեշտ է վերանայել, ինչպես նաև ուսումնասիրելով արտաքին շուկաներն՝ ուղղորդել, թե որտեղ կարող են բարենպաստ պայմաններում հայտնվել ՀՀ ՓՄՁ-ները: Նմանատիպ խորհրդատվական ծառայությունները կարող են իսկապես բարձրացնել ՓՄՁ ՋԱԿ-ի դերը, ինչպես նաև ՓՄՁ-ների կողմից այդ կառույցի հանդեպ վստահության մակարդակը:

Հայաստանում մի շարք ՓՄՁ սուբյեկտներ խնդիր ունեն ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման բնագավառում աջակցություն ստանալու հարցում: Այս առումով ժամանակակից կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների

կիրառման, ինչպես նաև ՓՄՁ-ների գիտական ուղղվածություն ունեցող հմտությունների զարգացումը շատ մեծ կարևորություն է ստանում:

ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական աջակցությունը, ինչպես նաև ֆինանսավորման ծավալների ավելացումը, լուրջ հեռանկարային ծրագրերի ֆինանսավորումը պետք է միշտ գտնվի ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում և ոչ մի գաղափար չպետք է անտեղի կորչի:

Հարկավոր է նաև ընդլայնել ՓՄՁ սուբյեկտներին վարկային երաշխավորությունների տրամադրման ծրագիրը, պարզեցնել երաշխիքների տրամադրման մեխանիզմները, կրճատել ընթացակարգերը, ինչպես նաև հնարավորության դեպքում ավելացնել երաշխավորվող գումարների չափերը:

Բավականին լուրջ նախաձեռնություն կարող է լինել նաև ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվող վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման ծրագրի կյանքի կոչումը, քանի որ յուրաքանչյուր սուբսիդավորված տոկոս առավել մեծ է դարձնում հավանականությունը, որ ՓՄՁ սուբյեկտները կդիմանան մրցակցությանը, ինչպես նաև առավել կարճ ժամանակահատվածում կմոտենան անվնասաբերության կետին:

ՓՄՁ-ի սուբյեկտների կադրային ներուժի ձևավորման և զարգացման հարցերում ևս անհրաժեշտ է մշակել ու իրականացնել լուրջ պետական ծրագրեր, քանի որ գիտելիքահենք տնտեսության ձևավորման համար անհրաժեշտ են նորարարական մտածելակերպով օժտված և զարգացած ձեռնարկատերեր, որոնք իրենց անձնակազմի հետ մեկտեղ պետք է լինեն մրցունակ և կարողանան դիմակայել սուր մրցակցային պայքարում:

Հայաստանը ՓՄՁ ոլորտի զարգացման համար անհրաժեշտ է, որ ունենա նաև լուրջ համագործակիցներ, դա կարող է արվել Ձեռնարկությունների եվրոպական ցանցի հաղորդակցման կենտրոնի գործունեության հետ համագործակցության շրջանակների ընդլայնման միջոցով: Աշխարհում ընդունված է նաև համացանցում սոցիալական ցանցերի օրինակով ստեղծել նաև ձեռնարկությունների ցանցեր, այս գաղափարը և ՓՄՁ-ների միջև համագործակցությունը, առկա խնդիրներին լուծում տալու համար հստակ խնդիրների և հարցերի մատնանշումը կարող է լուրջ առաջընթաց ապահովել ձեռնարկատիրական և գործարար միջավայրերում առկա բացասական զարգացումների ընթացքը կանխելու առումով: Այսպիսի նախաձեռնություն իրականացվում է ՌԴ-ում, որտեղ բավականին առաջընթաց է արձանագրվել, ինչպես նաև կա նախաձեռնողական խումբ, որը ՓՄՁ-ների կողմից նրանց դիմելու պարագայում փորձում են վերացնել այն բոլոր խնդիրները, որոնք առկա են նրանց առաջ և առանց որոշակի համագործակցության և միջամտության շատ երկար ժամանակում դրանք կստանան իրենց լուծումները:

Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ-ի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում: Սա լուրջ հեռանկար ունեցող գաղափար է, որը ևս պետք է իրագործել ՀՀ ՓՄՁ-ների և օտարերկրյա ՓՄՁ-ների միջև ակտիվ համագործակցության միջավայր ստեղծելու, համատեղ ֆորումներ կազմակերպելու միջոցով:

Վերոնշյալ բոլոր հարցերը լուրջ օրենսդրական նախաձեռնությունների հիմք կարող են հանդիսանալ, որպեսզի ոչ միայն ծրագրային, այլ նաև օրենսդրական մակարդակով կազմակերպվի ՓՄՁ-ների աջակցությունն ու հետագա զարգացումը:

Իհարկե, նշված լուծումները կյանքի կոչվելու պարագայում կարող են առաջխաղացման հիմքեր ստեղծել ՓՄՁ-ների գործունեության համար, սակայն դժվարություններն այնքան շատ են, որ ստիպում են մի շարք ձեռնարկությունների անգամ պետական աջակցության և արտոնյալ պայմանների դեպքում ևս դուրս գալ շուկայից, քանի որ մենք գործ ունենք գլոբալ մրցակցային շուկայի հետ, իսկ այստեղ մրցակցության պայմանները թելադրում են առավել ուժեղ ձեռնարկությունները: Եվ որպեսզի ՓՄՁ-ները կարողանան դիմակայել ճգնաժամերին և մրցակիցներին պետք է կարողանան դրսևորել ճգնաժամերի դեմ ճկունություն, իսկ մրցակիցների հանդեպ ունենան առավելություն:



ՓՄՁ-ի զարգացման աստիճանը երկրի տնտեսական վիճակի գնահատման գլխավոր չափանիշներից մեկն է, որը հիմք է հանդիսանում, որպեսզի պետականորեն ՓՄՁ-ների նկատմամբ տարվի աջակցության քաղաքականություն: Հատկապես, ճգնաժամային իրավիճակներում նման աջակցության կարևորությունը շատ մեծ է, և առանց վերջինիս ՓՄՁ-ների համար առաջանում են մի շարք հիմնախնդիրներ, որոնք կասկածի տակ են դնում հետագայում նրանց գործունեության շարունակվելու հնարավորությունները: Ուսումնասիրելով վերոնշյալ հիմնախնդիրները, ինչպես նաև ատենախոսության թեմայի շրջանակներում կատարված ուսումնասիրությունների ու վերլուծությունների արդյունքում՝ հնարավորություն ենք ստացել հանգել մի շարք **եզրակացությունների** և դրանցից բխող **առաջարկությունների**:

- Յուրաքանչյուր հիմնահարցի ուսումնասիրությունը, նախ և առաջ սկսվում է տեսական մոտեցումների, տարբեր հեղինակների կարծիքների, փորձագետների գնահատականների վերհանմամբ: Այս համատեքստում կարևոր հարցադրումներից են, թե ինչպես են տարբեր տեսությունները փորձում գտնել ՓՄՁ-ների գործունեության հիմնական խնդիրների լուծման ուղիները, որոնք առաջանում են ճգնաժամային իրավիճակներում: Այստեղ, իհարկե, կան տեսաբաններ, որոնք գտնում են, որ անհարժեշտ է աջակցություն ցուցաբերել ՓՄՁ-ներին, այդ մոտեցման կողմնակիցներն են Չիկագոյի դպրոցի կամ ժամանակակից քեյնսականության հետևորդները, մյուս կողմից առկա է ավստրիական դպրոցի կարծիքը, ըստ որի տնտեսության առողջացման համար անհրաժեշտ է ՓՄՁ-ներին չաջակցել և թույլ տալ, որ նրանք սնանկաման կամ կլանվեն ու միաձուլվեն հզոր կորպորացիաներին: Առկա է նաև այն մոտեցումը, որ պետք է աջակցություն ցուցաբերել խոշոր կորպորացիաներին, քանի որ դրանք բավականին մեծ են սնանկանալու կամ կործանվելու համար: Այս ամենի հետ մեկտեղ մենք հակված ենք այն մոտեցմանը, որ ՓՄՁ-ներին, հատկապես, ճգնաժամային իրավիճակներում անհրաժեշտ է ցուցաբերել բազմակողմանի աջակցություն, քանի որ եթե դա չի արվում տվյալ ժամանակահատվածում, ապա պետությունը բավականին երկար ժամանակ հետո պետք է սպասի նոր ձևավորվող փոքր ձեռնարկությունների հզորացմանը, դրանց միջին ձեռնարկությունների չափերի հասնելուն, քանի որ այդ գործընթացը շարունակական բնույթ է կրում և ցանկացած ընդհատում առաջացնում է տնտեսական հետընթաց:
- Կարևոր է նաև, թե ճգնաժամի որ տեսակն ինչպես է ազդում ՓՄՁ-ների գործունեության վրա: Այս տեսանկյունից ուսումնասիրելով առանձին ճգնաժամների պատմական առանձնահատկությունները նկատում ենք, որ արժութային ճգնաժամերը կաթվածահար կարող են անել տնտեսությունը, քանի որ անորոշության պայմաններում ՓՄՁ-ների գործունեությունը դառնում է խիստ անորոշ, մյուս կողմից առաջանում են խզումներ առանձին ժամանակահատվածներում վաճառված ապրանքների գների միջև և դժվարին իրավիճակում են հայտնվում այն ՓՄՁ-ները, որոնք բախվել են էժան վաճառված վերջնական արտադրանքի և թանկ ձեռք բերվելիք հումքի խնդրի հետ: Բանկային ճգնաժամներից հիմնականում տուժում են այն ՓՄՁ-ները և կազմակերպությունները, որոնց ավանդները չեն վերադարձվում, ինչպես օրինակ ներկայումս Կիպրոսում է տեղի ունենում և այլն: Ներքին պարտքային ճգնաժամերը սովորաբար վերափոխվում են արժութային ճգնաժամերի, քանի որ ներքին պարտքերի ֆինանսավորման համար պետությունը ստիպված անցնում է էմիսիոն քաղաքականության, այս խնդիրը որոշակի առումով տարբերվում է ԵՄ երկրների համար, քանի որ տվյալ պարագայում նրանք գործ ունենք ԵԿԲ-ի (Եվրոպական կենտրոնական բանկի) հետ, որը կարգավորում է եվրոյի գոտու խնդիրներն ամբողջական կերպով՝ առանձին երկրների էմիսիոն լծակներ չունենալու պատճառով:
- Համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող բացասական զարգացումները տարբեր փոխանցման ուղիներով կամ մեխանիզմների միջոցով ներթափանցում են այս կամ այն երկրի տնտեսություն՝ առաջացնելով մի շարք բացասական զարգացումներ: Այս խնդիրը դիտարկելով տնային տնտեսությունների և ՓՄՁ-ների

վրա ազդեցության տեսանկյունից նկատում ենք, որ տնտեսական արտաքին շուկերն ամենամեծ ազդեցությունը թողնում են տնտեսության հենց այս երկու գործակալների վրա: Վերջինս ստիպում է, որ ուսումնասիրենք տնտեսական ցնցումների փոխանցման յուրաքանչյուր ուղին՝ տրանսֆերտներ, ներքին և օտարերկրյա աշխատանքի շուկաներ, արտաքին առևտուր, ՕՈՒՆ-ներ (օտարերկրյա ուղղակի ներդրում), տուրիզմ և այլն: Այս ուղիներից յուրաքանչյուրի միջոցով փոխանցվող ազդեցություններին դիմակայելու համար ՓՄՁ-ները և տնային տնտեսությունները պետք է մշակեն համապատասխան ռազմավարություններ, և վերջիններիս իրատեսական և լուրջ հայեցակարգային հիմք ունենալու, ինչպես նաև իրագործելի լինելու հանգամանքով է պայմանավորված ճգնաժամային բացասական զարգացումներին դիմակայելու և առավել ճկուն գտնվելու հնարավորությունը:

- ՓՄՁ-ների կողմից ճգնաժամների հաղթահարման արտերկրյա փորձի ուսումնասիրությունն ունի շատ մեծ կարևորություն, քանի որ այս հիմնահարցը կարևորվում է երկու առումներով, այն է՝ ինչպիսին է կոնկրետ ՓՄՁ-ի կողմից ընտրված քաղաքականությունը ճգնաժամային իրավիճակից դուրս գալու համար և մյուս կողմից ինչպիսին է պետության կողմից վարվող քաղաքականությունը, ինչպիսի ոչ դրամական և դրամական բնույթի միջոցառումներ են կիրառվում կառավարության կողմից հաղթահարելու համար ի հայտ եկած դժվարությունները: Այսինքն՝ պետական կառավարման մարմինների կողմից ՓՄՁ-ներին ուղղված քաղաքականությունը կարող է լինել 3 ուղղվածության, այն է՝ աջակցություն ՓՄՁ-ներին, չեզոք դիրքի գրավում կամ աջակցության բացակայություն, և վերջին տարբերակով ՓՄՁ-ների համար գործունեության առավել ծանր պայմանների ստեղծում՝ հարկային բեռի բարձրացում, արտոնությունների վերացում և այլն: Այս ամենից ելնելով արտաքին գործոնների ազդեցությունը հաշվի առնելով, ինչպես նաև ներքին ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործման, ինչպես նաև ճիշտ կառավարչական որոշումներ ընդունելով ՓՄՁ-ները կարող են պայքարել ճգնաժամային իրավիճակների դեմ:
- Կազմակերպությունների ֆինանսական ոլորտում առկա խնդիրները բազմազան են և ունեն տարբեր ուղղվածություն, դրանք պահանջում են ուսումնասիրություն և որոշակի լուծումներ ամեն հարցի շուրջ: Մեր կողմից բարձրացված խնդիրները և դրանց համապատասխան լուծման տարբերակները հետաքրքրություն են ներկայացնում այնքանով, որքանով որ շատ դեպքերում իրական փաստերը չեն լուսաբանվում: Բացակայում են այնպիսի տվյալներ, թե ինչքան են կազմում ՓՄՁ-ների կողմից կրած վնասները, միջին և խոշոր կազմակերպությունների առավել հզորացումն ինչ տեսակարար կշռով է արտահայտվում, միջմարդային անհամաչափ զարգացումներն ինչքան են խորանում և այլն: Սրանք այն հարցերն են, որոնք արդյունավետ կազմակերպված և լուրջ մեթոդաբանական բազայի և գիտելիքների ստեղծման միջոցով կարելի է հաղթահարել: Այստեղ պետական կարգավորման և միջամտության գործոնը ևս չպետք է անտեսել, քանի որ պետական աջակցությունը կարող է հիմք հանդիսանալ պաշտպանելու փոքր ձեռնարկություններին՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով նրանց գործունեության համար:
- Ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցություններն իրենց վրա զգացին աշխարհի և Հայաստանի մի շարք ՓՄՁ-ներ: Բավականին դժվարին իրավիճակում հայտնված ՓՄՁ-ներ ստիպված էին շատ դեպքերում ընտրություն կատարել գործունեության դադարեցման և մյուս կողմից գործունեությունը շարունակելու հարցում: Այդ իսկ պատճառով նրանց կողմից որդեգրվում էին ռազմավարություններ, որոնք շատ դեպքերում արդարացված չէին: Ինչ վերաբերում է ՓՄՁ-ների պետական աջակցությանը և ֆինանսավորմանը, ապա այստեղ խնդիրներն էական լուծում չստացան, որի արդյունքում հայաստանյան ՓՄՁ-ների մեծ մասը դեռևս շարունակում է վերականգնվել 2009թ.-ի ֆինանսատնտեսական ճգնաժամի ուժեղ հարվածից հետո:
- ՀՀ ՓՄՁ աջակցման գործիքները մեծամասամբ հիմնված են սոցիալական ուղղություն ունեցող մոտեցումների վրա, որոնց արդյունավետությունը փոքր է՝

համեմատած մրցունակության կամ նորարարությունների (ելենելով ՏՀՁԿ փորձից) զարգացման մոտեցումների հետ: Իհարկե, բարձր աղքատության մակարդակ ունեցող Հայաստանի համար դա դրական է, սակայն վերջինս գործել կարող է միայն ճգնաժամային իրավիճակներում, իսկ հետագա առաջընթաց և զարգացում ապահովելու համար առավել նորարարական մոտեցումներ են անհրաժեշտ, որպեսզի գոյատևում ապրող ՓՄՁ ոլորտն անցում կատարի մրցունակ և շուկաներ ներգրավելու հակվածություն ունեցող ՓՄՁ-ների: Կառավարությունը պետք է ջանք չխնայի արտերկրյա ցանկացած շուկա ներգրավելու ունակություն ունեցող ՓՄՁ-ների ներուժը հզորացնելու համար և մյուս կողմից այդ ռեսուրսներն արդյունավետ օգտագործելով արտահանման խթանման քաղաքականությունն իրագործի:

- Աջակցման մեխանիզմները տեղայնացված չեն: Այդ մեխանիզմներից դուրս են մնում ՏԻՄ-երը (տեղական ինքնակառավարման մարմին), ինչը թույլ չի տալիս ապահովել տեղական և նպատակաուղղված աջակցություն ՓՄՁ-ներին: Տարբեր վերլուծությունները ցույց են տալիս, որ մարզերի և Երևան քաղաքի միջև առկա է խիստ անհամաչափ զարգացվածություն, ինչպես նաև ՓՄՁ-ների բաշխվածություն: Վերջինս նշանակում է, որ ՓՄՁ-ների մարզային ներուժը լիարժեք չի օգտագործվում: Այս առումով անհրաժեշտ է առանձին օրենսդրական նախաձեռնությունների միջոցով հասնել նրան, որ մարզերի ներգրավվածությունը մեծանա, առանձին գործակիցներով արտոնություններ տրամադրել մարզային ՓՄՁ-ների համար, իսկ ցանկացած օրենսդրական փոփոխություն թեկուզ անցումային դրույթների շրջանակներում որոշակի ժամանակահատվածի համար արտոնություններ սահմանել մարզերի համար, քանի որ Երևանի համար ընդունված օրենքները կարող են շատ ծանր և խիստ լինել, և վտանգել մարզային ՓՄՁ-ների գործունեությունը:
- Իրավական բարենպաստ դաշտի ձևավորումը դանդաղ, բայց կայուն հիմքերի վրա է ՀՀ-ում: Դրական միտումներն ավելի տեսանելի են դարձել վերջին տարիներին: Սա հիմնավորվում է նաև “Doing Business”-ի հաշվետվություններով: Սակայն այսօրվա պետք չէ սահմանափակվել, քանի որ աշխարհի տնտեսությունները մրցակցում են նաև “Doing Business”-ի վարկանիշային աղյուսակում իրենց դիրքերը բարելավելու համար, իսկ դա նկատելի է նաև նրանով, որ երբեմն բարձր վարկանիշային տեղեր ունենալով հետընթաց ենք ապրում, այսինքն՝ պետք է բարեփոխումները լինեն շարունակական՝ թույլ չտալու համար դիրքային թուլացումներ: Իհարկե, ցանկացած ցուցանիշով ապահովված առաջընթացը հնարավորություն կարող է տալ ուշադրությունը սևեռել այլ ավելի ցածր վարկանիշով խնդիրների վրա, սակայն այստեղ ևս պետք է տարբերակված մոտեցում կիրառել և հաշվի առնել գործարարության վարման համար 10 հիմնական խումբ ցուցանիշներից, որն է առաջնային և, ըստ այդմ, էլ սկսել կարգավորել դրանք:
- Վերջին տարիներին կտրուկ նվազել է վարկային երաշխավորությունների ծավալը: 2010թ.-ին երաշխավորություն ստանալու հայտերի քանակը եղել է 23, որից բավարարվել է 13-ը: Երաշխիք ստանալու գործընթացը բավականին բարդ է և ժամանակատար: Այս համակարգը ներդրվել է վեց տարի առաջ և հիմա չի բավարարում ՓՄՁ պահանջներին: Վարկեր ստանալու բարդությունը և երաշխիքային ու գրավային բարձր պահանջները վարկավորման գործընթացն ուղղակի դարձնում են անհնարին հատկապես նորաստեղծ, գերփոքր ու փոքր կազմակերպությունների համար: Այս համակարգը չկարգավորելու պարագայում ՓՄՁ ՁԱԿ-ը կկորցնի իր երաշխիքներ և վարկեր տրամադրող գործառույթը, քանի որ այն ՓՄՁ ոլորտի աջակցությանը ծառայելու փոխարեն ընթացակարգային լուրջ դժվարություններ է առաջացնում նրանց համար, և մյուս կողմից ՓՄՁ-ները վստահությունը կորցնում են այդ երաշխիքների հանդեպ, դա համարելով ոչ բոլորին հասանելի ֆինանսավորման աղբյուր:
- ՓՄՁ աջակցող ենթակառուցվածքների մեջ ՀՀ պետական աջակցություն իրականացնել լիազորված է ՓՄՁ ՁԱԿ-ը: Դուրս են մնացել մարզային ԱԱԴ-ները (առևտրաարդյունաբերական պալատ), բիզնես ասոցիացիաները և աջակից այլ

կառույցներ: Գործուն մեխանիզմների փոխարեն որպես գործարարության աջակցության ենթակառուցվածք ընկալվում է միայն ՓՄՁ ՁԱԿ-ը և դրա կարողությունների հզորացումը: Տնտեսական նոր մարտահրավերները պահանջում են ՓՄՁ աջակցող ենթակառուցվածքների և պետական աջակցության ծրագրերի արմատական փոփոխություններ: Այստեղ հարկավոր է կիրառել համակարգված մոտեցում և զարգացնել ենթակառուցվածքների շղթան այն վերածելով զարգացման քլաստերի:

- ՓՄՁ-ների համար բարենպաստ հարկային քաղաքականության իրականացումն ամրագրված է «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի և ՓՄՁ պետական աջակցության հիմնական ուղղությունների մեջ: Ցավոք, 2001-2012թթ. ՓՄՁ աջակցման ոչ մի ծրագրի մեջ ներառված չեն այս ոլորտին ուղղված միջոցառումներ: Դա սկզբունքային բաց է, որը պետք է կարգավորել, իսկ աջակցության այս գործիքը շատ կարևոր է, քանի որ հարկային համակարգում ՓՄՁ ոլորտն իսկապես ունի խնդիրներ, դա արձանագրում են նաև միջազգային վարկանիշային կազմակերպությունները:
- Համաշխարհային մի շարք կազմակերպությունների կողմից հաշվարկվում են մի շարք համաթվեր և ինդեքսներ, որոնք հիմնվում են և՛ տնտեսական ցուցանիշների, և՛ տարբեր փորձագիտական գնահատականների և հարցումների վրա, որոնք վկայում են այն մասին, որ մեր երկիրը գտնվում է ոչ բարենպաստ դիրքերում, այս փաստն, իհարկե, ցավալի է, սակայն ՀՀ կառավարությունը և համապատասխան գերատեսչություններն ուղղակի պարտավոր են իրականացնել այնպիսի քայլեր, որոնք կբարձրացնեն ՀՀ ձեռնարկությունների վարկանիշը, որն իհարկե, բազմագործոնային բարելավման հետ է կապված, քանի որ երկրի վարկանիշը որոշվում է տվյալ երկրի մրցունակության միջոցով, և ինչքան մրցունակ են երկրի ձեռնարկությունները, այնքան մրցունակ է երկիրը:

Հետազոտության հիմնական արդյունքները և ատենախոսության կարևոր դրույթները արտացոլված են հրապարակված գիտական *վեց հոդվածներում*:

1. Даниелян А., Влияние финансово-экономического кризиса на малое и среднее предпринимательство в РА, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում», Հանրապետական գիտաժողովի նյութեր, գիրք 2, -եր, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011թ., էջեր 297-299:
2. Затибян А., Даниелян А., Малое и среднее предпринимательство как объект управления в условиях финансово-экономического кризиса в РА, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում», Հանրապետական գիտաժողովի նյութեր, գիրք 2, -եր, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011թ., էջեր 300-304:
3. Даниелян А., Некоторые вопросы совершенствования финансовой системы малого и среднего предпринимательства в Республике Армения, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները» (գիտական հոդվածների ժողովածու-4(12)), -եր., «Անանիա Շիրակացի» ՄՀՀ, 2011թ., էջ 244-247:
4. Даниелян А., Проблемы совершенствования финансового механизма развития малого и среднего предпринимательства, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում», Հանրապետական գիտաժողովի նյութեր, գիրք 1, -եր, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012թ., էջ 211-215:
5. Դանիելյան Ա., Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը և փոքր ու միջին ձեռնարկությունների աջակցության հիմնահարցերը, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում», Հանրապետական գիտաժողովի նյութեր, գիրք 1, -եր, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012թ., էջ 121-124:
6. Դանիելյան Ա., ՓՄՁ-ների ֆինանսավորման և ֆինանսատնտեսական ճգնաժամի փոխկապվածության հիմնահարցերի շուրջ, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» հանրապետական գիտաժողովի նյութեր, գիրք 2, -եր, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012թ., էջ 180-184:

**ДАНИЕЛЯН АРМАН АКОПОВИЧ**

**“ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ДЕЯТЕЛЬНОСТИ МАЛЫХ И  
СРЕДНИХ ПРЕДПРИЯТИЙ В УСЛОВИЯХ ФИНАНСОВО-  
ЭКОНОМИЧЕСКОГО КРИЗИСА  
(НА ПРИМЕРЕ РА)”**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 “Финансы, денежное обращение и кредит”.

Защита диссертации состоится 7 июня 2013г. в 15:00 часов на заседании специализированного совета ВАК РА 015 по экономике, действующего в Ереванском государственном университете по адресу г. Ереван, 0009, ул. Абовяна 52.

**Р Е З Ю М Е**

В РА в последние годы ведению предпринимательской деятельности мешает ряд проблем, обусловленных негативным влиянием финансово-экономического кризиса, и, несмотря на то обстоятельство, что сформировано нормативно- правовое поле, созданы соответствующие органы управления, осуществляются финансовые вложения со стороны зарубежных и международных организаций, проведены реформы в налоговой, таможенной и кредитной сферах, проблемы развертывания предпринимательской деятельности имеют тенденцию к углублению. Это связано с отсутствием экономических стимулов, применением во многих случаях двойных стандартов для малых, средних предприятий (МСП) и крупных предприятий, с наличием случаев поглощений, низким удельным весом МСП, занятых в сфере материального производства. Кроме того, МСП не выступают звеньями цепочки, оказывающими поддержку крупным предприятиям, в экономике отсутствуют крупные предприятия, выступающие в роли локомотива и способные создать основанную на базе МСП солидную пирамиду. Существуют также проблемы неравномерного развития предпринимательства в марзах (областях) и т.д.

Основной целью диссертационной работы является исследование и анализ концептуальных и методологических проблем деятельности МСП в условиях финансово-экономического кризиса, разработка на основе изучения международного опыта научно обоснованных подходов к повышению эффективности антикризисного управления, а также на основе исследования нынешнего состояния организации деятельности МСП и оценки тенденций и перспектив ее дальнейшего развития разработка предложений по повышению эффективности управления деятельностью МСП и совершенствованию предпринимательских навыков.

Для достижения поставленной цели в диссертационной работе поставлены следующие основные задачи:

- изучить теории кризисов и их сопричастность к имеющимся проблемам в сфере финансовой деятельности малых и средних предприятий;
- исследовать и проанализировать пути трансформации кризисов и их социально-экономическое влияние на деятельность МСП;
- рассмотреть возможности внедрения современных механизмов управления МСП на основе анализа зарубежного опыта преодоления кризисов со стороны МСП;
- представить более обобщенный и комплексный анализ основных финансово-экономических показателей деятельности МСП в РА в условиях кризиса;
- проанализировать механизмы государственного регулирования МСП в контексте финансово-экономического кризиса и посткризисных развитий;
- рассмотреть сферу деятельности МСП, обосновать необходимость ее улучшения, выявить существующие проблемы в РА;
- изучить и антикризисные мероприятия правительства РА и их связь с подходами к преодолению кризиса малыми и средними предприятиями;
- изучить и проанализировать возможности повышения потенциала преодоления кризиса и пути совершенствования финансовых механизмов деятельности МСП.

Основная научная новизна диссертационной работы заключается в следующих результатах:

- на основе изучения зарубежного опыта преодоления кризиса со стороны МСП, а также особенностей деятельности МСП в условиях финансово-экономических кризисов дана оценка возможностям применения этого опыта в РА и привязки его к местным условиям;
- выявлены направленные на преодоление кризисов МСП подходы, обусловленные применением соответствующих предупредительных систем против финансово-экономических кризисов, проникающих в экономику страны разными путями;
- разработаны альтернативные подходы к совершенствованию механизмов антикризисного управления МСП, а также к поиску финансовых средств в целях стимулирования деятельности МСП, связанные с предоставлением государственных гарантий и применением механизмов, снижающих риски кредитования;
- в результате всестороннего анализа законодательного поля, регулирующего деятельность МСП, выявлены основные пути его совершенствования, направленные на стимулирование деятельности МСП в условиях финансово-экономических кризисов и на повышение эффективности антикризисного управления.

**ARMAN HAKOB DANIELYAN**

**APPROACHES TO IMPROVING THE PERFORMANCE OF SMALL AND  
MEDIUM-SIZED ENTERPRISES DURING THE FINANCIAL AND  
ECONOMIC CRISIS  
(ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARMENIA)**

The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Economics in the Field of “Finance, Cash Flow and Credit” 08.00.03.

The defense of Dissertation will take place on 7 June 2013, at 15:00 at the Meeting of Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University.

Address: 0009, Yerevan, 52 Abovyan Street.

**ABSTRACT**

For the last couple of years the entrepreneurs have started facing several challenges while doing business in Armenia owing to the negative impact of the financial and economic crisis. Although Armenia has a rigorous, well-crafted legislation, all required state institutions have been established, the nation attracted both local and foreign investments; initiated and implemented tax and customs reforms; and designed banking legislation, however by doing business in Armenia the entrepreneurs will face more and even deepening problems. Armenia lacks economic incentives, in some cases double standards are applicable to both large and small and medium-sized enterprises (SMEs); and several acquisitions have taken place. The share of SMEs in the manufacturing output is negligible; they don't tend to capture more elements of the value chain of the large enterprises, the drivers of the economic growth with SMEs playing the role related and supporting industries. The unemployment is becoming more rooted, and etc.

The main objectives of the dissertation thesis are: to study and analyze the conceptual and methodological issues that are related with the performance of SMEs during the crisis; based on the study of best practices worldwide to propose scientifically justified mechanisms for improving the efficiency of the crisis response measures; and by studying the current practices of running a business by SMEs and assessing the future patterns of trends and perspectives to propose approaches aimed at developing managerial skills and improving the quality of SME management.

In order to meet the above-stated goals the following objectives were undertaken:

- to study various crisis theories and how they explain the issues the SMEs face related with financial performance;
- to study and analyze the crisis transmission channels and the social and economic impact of each channel on the performance of the SMEs;

- based on the analysis of crisis coping strategies adopted by overseas SMEs to consider contemporary management practices that could be utilized by the Armenian SMEs;
- to present the detailed analysis of main indicators that describe the financial performance of the Armenian SMEs during the crisis;
- to analyze SME state regulatory mechanisms during the financial and economic crisis and its aftermath;
- to study the business climate for SMEs and the necessity to improve it and issues the enterprises face;
- to study and analyze the anti-crisis measures of the Armenian government and their role in explaining the crisis coping strategies adopted by the SMEs;
- to study and analyze the potential of the SMEs that needs to be improved in adopting crisis coping mechanisms; and practices that need to be utilized to improve the financial performance of the SMEs;

Implications and/or applications of the main scientific novelty of the dissertation thesis could be listed as followings:

- Based on study of the crisis coping mechanisms adopted by overseas SMEs, and peculiarities of the performance of SMEs during the financial and economic crisis; the possibility of adopting and adjusting/modifying these practices by the Armenian SMEs were discussed;
- To identify the main crisis coping mechanisms that could be adopted during the financial and economic crisis by the SMEs owing to various crisis transmission mechanisms and respective preventive systems in place;
- Practices that are aimed at improving the crisis coping mechanisms by the SMEs were designed; and alternatives for attracting financial resources in the context of improvement of the performance of SMEs were proposed based on state guarantees provided by the government and application of mechanisms to reduce the risks of loans;
- Based on the detailed analysis of the legislation regulating the activities of SMEs the main respective legislative changes were identified that would improve the performance of SMEs and increase the efficiency of the crisis response measures and the overall anti-crisis management practices.